ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՄԵՐԻ ԿԱՐԵՆԻ

ԱՊՕՐԻՆԻ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԲՌՆԱԳԱՆՁՄԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՎԱԾ ՁԵՎ

ԺԲ.00.04- «Դատական իրավունք՝ դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, վարչական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2024

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

МЕРИ КАРЕНОВНА ХАЧАТРЯН

ПРОИЗВОДСТВО О КОНФИСКАЦИИ СОБСТВЕННОСТИ НЕЗАКОННОГО ПРОИСХОЖДЕНИЯ КАК ДИФФЕРЕНЦИОННАЯ ФОРМА ГРАЖДАНСКОГО ПРОЦЕССА

диссертация на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.04. – “Судебное право – судоустройство, гражданский процесс, административный процесс, уголовный процесс, криминалистика, судебная экспертиза, адвокатура, теория оперативнорозыскной деятельности”

АВТОРЕФЕРАТ

ЕРЕВАН-2024

Ատենախոսության թեման հաստատվել է
Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ **իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր**
Վահե Վաղինակի Հովհաննիսյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ **իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր**
Սամվել Աղվանի Դիլբանդյան
իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ
Վահագն Կոլյայի Դալլաքյան

Առաջատար կազմակերպություն՝ **Հայ-ռուսական համալսարան**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2024 թ. դեկտեմբերի 26-ին, ժամը 12^{00}-ին ՀՀ ԲԿԳԿ-ի՝ Երևանի պետական համալսարանում գործող իրավագիտության 001 մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքվել է 2024 թ. նոյեմբերի 25-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝
իրավ. գիտ. թեկ., դոցենտ **Ժ. Ա. Ստեփանյան**

Тема диссертации утверждена в
Ереванском государственном университете

Научный руководитель: **доктор юрид. наук, профессор**
Ваге Вагинакович Оганесян

Официальные оппоненты: **доктор юрид. наук, профессор**
Самвел Агванович Дилбандян
кандидат юрид. наук, доцент
Ваагн Коляевич Даллакян

Ведущая организация: Российско-Армянский университет

Защита состоится 26-ого декабря 2024г., в 12^{00} часов, на заседании специализированного совета КВОН 001 при Ереванском государственном университете (0025, г. Ереван, ул. Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки ЕГУ.

Автореферат разослан 25-ого ноября 2024 года.

Ученый секретарь специализированного совета:
кандидат юрид. наук, доцент **Ж. А. Степанян**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Վերջին տարիներին առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման կառուցակարգերը ակտիվորեն ներդրվում են տարբեր պետությունների իրավական համակարգերում: Դրան ազդակ է ծառայել հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքերը քրեական դատավարության կարգով բռնագանձելու անարդյունավետությունը: Եվրոպայի հանձնաժողովը առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման կառուցակարգերի ներդրման անհրաժեշտությունն ուսումնասիրելիս կատարված հետազոտությունների ժամանակ պարզել է, որ զգալի անհամապատասխանություն կա հանցագործների կատարած ներդրումների և այն ակտիվների, որոնք ավանդական եղանակներով հաջողվում է նրանցից փաստացի բռնագանձել:

Հանցավոր գործունեության հետ առնչություն ունեցող գույքի՝ առանց մեղադրական դատավճռի բռնագանձման ինստիտուտը առաջնահերթ հետապնդում է հանրային շահի պաշտպանության նպատակ և ուղղված է հանցագործության կատարման արդյունքում կամ կատարման նպատակով ձեռք բերված գույքի իրավական վիճակի հստակեցմանն ու օրինական շրջանառություն բերելուն: Քննարկվող ինստիտուտի հիմնական առանձնահատկությունն ու նորարարությունը դրսևորվում է նրանում, որ այս ռեժիմով գույքը բռնագանձելու համար չի պահանջվում մեղադրական դատավճռի առկայություն, իսկ բռնագանձումը որոշ մոդելների դեպքում իրականացվում է քաղաքացիական դատավարության կարգով ապացուցողական կանխավարկածներ գործադրելու հիման վրա:

ՀՀ իրավական համակարգում առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման ինստիտուտը ներդրվել է 2020 թվականի ապրիլի 16-ին ընդունված «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքով (այսուհետ նաև՝ Օրենք), որով առաջադրվեց հանցավորության և կոռուպցիայի դեմ պայքարի նոր մոտեցում: Այժմ գույքի օրինական ծագումը չհաստատվելու դեպքում գույքը կարող է բռնագանձվել հօգուտ պետության մեղադրական դատավճռի, ընդհուպ հարուցված քրեական գործի բացակայության պայմաններում, մինչդեռ նախկինում հնարավոր էր բռնագանձել բացառապես դատավճռով հաստատված հանցագործության կատարման համար օգտագործված կամ դրա արդյունքում ստացված գույքը:

Հաշվի առնելով որոշ երկրներում քաղաքացիական դատավարության կարգով քննվող գույքի դեմ (in rem) բռնագանձման վարույթների արդյունավետությունը՝ ազգային օրենսդրությամբ նախատեսվել է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջի քաղաքացիական դատավարության կարգով քննությունը: Լինելով նորույթ հայրենական իրավական համակարգում՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ինստիտուտը

դեռևս ոչ միայն համակողմանիորեն, այլև առանձին հարցերի մասով չի դարձել գիտական համալիր հետազոտությունների առարկա և գործնականում չի ստացել ամբողջական կիրառում:

Արժանահիշատակ է այն հանգամանքը, որ նշված ինստիտուտի գործադրումը առնչվում է անձի՝ սահմանադրորեն երաշխավորված սեփականության իրավունքի հետ, քանի որ զուգորդվում է անձի փաստացի տիրապետման ներքո գտնվող գույքը հօգուտ պետության բռնագանձելով: Ավելին, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթների շրջանակներում բազմիցս բարձրացվում է անձի արդար դատաքննության իրավունքն արդյունավետորեն իրացնելու հարցը, ուստի նշված ինստիտուտի ուսումնասիրումը, միջազգային պայմանագրերով և միջազգային կառույցների խորհրդատվական բնույթի փաստաթղթերով առաջարկվող չափանիշների ներդրումը առանցքային նշանակություն ունի հանցավոր ակտիվների շրջանառության դեմ պայքարի ոլորտում և գործընթացում ներգրավված անձանց իրավունքների պաշտպանության հարցում:

Ավելին, ՀՀ սահմանադրական դատարանում քննվում է «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի սահմանադրականության հարցը, ինչը աներկբայորեն վկայում է դրանցում առկա խնդրահարույց հարցերի մասին: Մասնավորապես, ՀՀ Ազգային Ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա ՀՀ սահմանադրական դատարանում քննվում է «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի՝ ՀՀ սահմանադրությանը համապատասխանության հարցը: Մյուս կողմից, ոչ վաղ անցյալում մեկնարկել է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցերի ներկայացումը դատարան, իսկ դատական պրակտիկան դեռևս գտնվում է ձևավորման փուլում: Մասնավորապես, Օրենքի գործողությունից ի վեր մինչև 2023 թվականի ավարտը ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջի վերաբերյալ թվով 94 հայցադիմումներ են ներկայացվել ՀՀ հակակոռուպցիոն դատարան: Ուստի առավել քան հրատապ է քննարկվող ինստիտուտի համակարգային ուսումնասիրությունը, թե՛ Օրենքի կատարելագործման և թե՛ միասնական դատական պրակտիկա ձևավորելու տեսանկյունից:

Հաշվի առնելով Օրենքով տվյալ վարույթին բնորոշ առանձնահատկությունները, այդ թվում՝ մինչև հայցադիմումի ներկայացումը անձի գույքի և եկամուտների վերաբերյալ ուսումնասիրության մինչդատական փուլը՝ հայցի հարուցման փուլում առաջացող խնդիրների և վարույթում շահագրգիռ անձանց իրավունքների երաշխավորման հարցերի վերաբերյալ կատարվելիք հետազոտությունը հավակնում է ունենալ տեսագործնական կարևորություն, իսկ ներկայացված եզրահանգումները կարող են ուղենիշային լինել իրավակիրառ պրակտիկայի, ինչպես նաև առկա կարգավորումների հետագա զարգացման համար:

Ամփոփելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ ընտրված թեմայի արդիականությունը և հետազոտման հրատապությունը պայմանավորված են հետևյալ գործոններով՝

1. Հայաստանի Հանրապետությունում մինչ օրս առկա չէ տվյալ ինստիտուտը համապարփակ ուսումնասիրող գիտահետազոտական աշխատություն:

2. Վեր հանված չեն ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման իրավահարաբերությունների բնույթը, վարույթի մինչդատական փուլի իրավական ռեժիմը, գործի քաղաքացիական դատավարության կարգով քննության տարբերակված կանոնները:

3. Հայրենական համակարգում նորույթ հանդիսանալու հանգամանքով պայմանավորված՝ Օրենքով սահմանված որոշ դատավարական նորմերի կիրառելիության վերաբերյալ դատական պրակտիկա դեռևս չի ձևավորվել, ուստի միասնական իրավակիրառ պրակտիկա ձևավորելու նախապայմաններից մեկը այլ պետությունների հաջող կիրառելիության փորձի ուսումնասիրությունն է:

Հետազոտության թեմայի մշակվածության աստիճանը և տեսական հիմքերը: Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ինստիտուտին նվիրված համընդգրկուն աշխատանք հայրենական իրավագիտության մեջ դեռևս առկա չէ, ուստի սույն հետազոտությունը միտված է լրացնելու առկա բացը: Այդուհանդերձ, ինստիտուտին վերաբերող որոշ հիմնահարցերի անդրադարձ է կատարվել Տ. Մարկոսյանի «Գույքի՝ ապօրինի ծագում ունենալը կանխավարկած, թե վարկած», Ռ. Կիրզինկայի «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի ««Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման» մասին օրենքը՝ եվրոպական չափանիշների լույսի ներքո», Վ. Հովհաննիսյանի և Տ. Մարկոսյանի «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի «մինչդատական» փուլի օրինականության նկատմամբ դատական վերահսկողության ինստիտուցիոնալ առանձնահատկությունները» գիտական ուսումնասիրություններում:

Արտասահմանյան առաջադեմ երկրներում հաջող կիրառելիության փորձեր գրանցելու արդյունքում քննարկվող թեմայի որոշ հարցերի անդրադարձ են կատարել արտասահմանյան գիտնականները, մասնավորապես՝ Կ. Նելսոնը «Գույքի քաղաքացիական բռնագանձման սահմանադրականությունը» (2016թ.) աշխատությունում, Թ. Սենսթը «Քաղաքացիական բռնագանձումը: Դատարանների ձախողումը» (2017թ.) աշխատությունում, Ջոն Պ. Ռուին և Ու. Սիբերը «Առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձումը Եվրոպայում: Առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձում թույլատրող կանոնների հնարավորություններն ու սահմանափակումները» (2015թ.) աշխատությունում: Նշված աշխատություններում առաջ քաշված որոշ տեսական դրույթներ առնչվում են ատենախոսությամբ ուսումնասիրված հիմնախնդիր-

ներին, այդուհանդերձ, գույքի բռնագանձման քաղաքացիադատավարական կարգին բնորոշ առանձնահատկությունները բավարար չափով չեն ուսումնասիրվել, ուստի սույն ատենախոսությամբ փորձ է կատարվել իրականացնելու համալիր գիտական հետազոտություն:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտն է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի նախաձեռնման և ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցի քննության կապակցությամբ առաջացած իրավահարաբերությունները: Հետազոտության առարկան են կազմում ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի՝ որպես քաղաքացիական դատավարության տարբերակված ձևի իրավական կարգավորման հիմնախնդիրները և ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցի քննության տարբերակված կանոնների դրսևորման առանձնահատկությունները:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Սույն հետազոտության նպատակն է ՀՀ քաղաքացիական դատավարությունում ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցերի հիման վրա հարուցվող գործերի քննության տեսական և գործնական հիմնախնդիրների համալիր ուսումնասիրությունը և դրա հիման վրա իրավակիրառ պրակտիկայի և օրենսդրության կատարելագործման առաջարկների մշակումը: Օրենքի մի շարք դրույթներ խնդրահարույց են և դատական պրակտիկայում կիրառվելու պարագայում կարող են առաջացնել համակարգային խնդիրներ, ուստի գիտագործնական համալիր ուսումնասիրություն կատարելու նպատակը այդ խնդիրների լուծմանն ուղղված առաջարկությունների ներկայացումն է:

Վերը նշված նպատակին հասնելու համար խնդիր է դրվել.

1) բացահայտել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ինստիտուտի տեղը ՀՀ իրավական համակարգում, առաջարկել դրա դիտարկումը որպես քաղաքացիական դատավարության տարբերակված ձև և ներկայացնել նշված տեսակետի հիմնավորումներ,

2) ուսումնասիրել առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման միջազգայնորեն կիրառելի մոդելները, համեմատական վերլուծություն կատարել ՀՀ իրավական համակարգում ներդրված ինստիտուտի հետ և վեր հանել այդ մոդելներից փոխառած մոտեցումները,

3) ուսումնասիրել արտասահմանյան երկրների օրենսդրությամբ նախատեսված վերաբերելի կարգավորումները՝ ներպետական օրենսդրությունը միջազգային լավագույն փորձի հիման վրա լրամշակելու նպատակով,

4) բացահայտել in rem (գույքի դեմ) հայցերի էությունը՝ համադրելով ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցի հետ, վերլուծել հայցի տարրերի դրսևորման առանձնահատկությունները,

5) առաջարկել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցադիմումի ձևին և բովանդակությանը ներկայացվող հատուկ պահանջներ,

ինչպես նաև դրանք չպահպանելու դատավարական հետևանքներ,

6) քննարկել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մինչդատական փուլում կատարվող գործողությունները և դրանց իրավական նշանակությունը հայց ներկայացնելու նախադրյալները սահմանելու տեսանկյունից,

7) ներկայացնել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցի իրավունքի նախադրյալները և ՀՀ գլխավոր դատախազության կողմից հայց ներկայացնելու լիազորության ծագման պայմանները,

8) ուսումնասիրել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթում կիրառելի ապացուցման բեռի բաշխման տարբերակված կանոնները և ապացուցողական կանխավարկածները, դրանց համատեքստում հետևություններ կատարել կողմերի մրցակցության սկզբունքի, անձի արդար դատաքննության իրավունքի ապահովման վերաբերյալ,

9) քննարկել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի մինչդատական փուլը հաշտության համաձայնության կնքմամբ ավարտելու կառուցակարգը, մշակել կնքված հաշտության համաձայնագիրը դատական կարգով հաստատելու ընթացակարգը և կատարելագործել ՀՀ գլխավոր դատախազության կողմից հաշտության առաջարկ ներկայացնելու լիազորության իրականացման հարցում վարույթում շահագրգռված անձանց իրավունքների ապահովման երաշխիքները,

10) ձևակերպել առաջարկներ քաղաքացիական դատավարությունում ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցերի քննության տարբերակված կանոններ սահմանելու և միասնական իրավակիրառ պրակտիկա ձևավորելու համար:

Հետազոտության իրավական և փորձառական հիմքերը: Հետազոտության իրավական և փորձառական հիմքը կազմել են քննարկվող ինստիտուտին առնչվող Հայաստանի Հանրապետության և արտասահմանյան նորմատիվ իրավական ակտերը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, ՀՀ սահմանադրական, ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության, հակակոռուպցիոն, վճռաբեկ և վերաքննիչ դատարանների դատական ակտերը, օտարերկրյա պետությունների դատական ակտերը, միջազգային կառույցների կողմից մշակված խորհրդատվական, աշխատանքային փաստաթղթերը և հետազոտությունները:

Հետազոտության ընդհանուր մեթոդաբանությունը: Պայմանավորված հետազոտության նպատակով և խնդիրներով՝ հետազոտության մեթոդոլոգիական հիմքն են կազմել համընդհանուր՝ դիալեկտիկական և պատմական, համատեսական՝ ինդուկցիայի, դեդուկցիայի, անալիզի և սինթեզի մեթոդների կիրառումը: Հատուկ մեթոդներից լայնորեն կիրառվել են համեմատաիրավական, ինչպես նաև պատմաիրավական, ձևական-իրավաբանական, իրավական նորմերի մեկնաբանման, համակարգային կառուցվածքային վերլու-

ծության մեթոդները:

Ատենախոսության գիտական նորույթը: Հետազոտության գիտական նորույթը կայանում է նրանում, որ հայրենական իրավագիտության մեջ առաջին անգամ հնարավորինս համալիր գիտահետազոտական ուսումնասիրության արդյունքում վեր են հանվել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ինստիտուտի իրավական բնույթը, այդ վարույթին բնորոշ առանձնահատկությունները և այլ վարույթներից տարբերակման չափանիշները, ներկայացվել են ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթում ներգրավված անձանց իրավունքների երաշխավորված իրացումն ու պաշտպանությունն ապահովելուն ուղղված նոր գաղափարներ ու առաջարկություններ: Հետազոտվել են հայրենական դատավարագիտության մեջ դեռևս չուսումնասիրված այնպիսի հարցեր, ինչպիսիք են ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի մինչդատական փուլում կատարվող գործողությունների իրավական նշանակությունը ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցի հարուցման համար, հաշտության համաձայնության կնքմամբ վարույթը հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրության փուլում ավարտելու հիմքերը և կարգը, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցի իրավունքի նախադրյալները, գործի քննության առանձնահատկությունները, գույքի ապօրինի ծագում ունենալու կանխավարկածի գործարկման պայմանները, վարույթում շահագրգիռ անձանց իրավունքների ապահովման երաշխիքները: Ինստիտուտի վերաբերյալ տեսական մակարդակով կատարված ուսումնասիրությունը, ինչպես նաև միջազգային, օտարերկրյա և ներպետական դատարանների դատական պրակտիկայի վերլուծությունը հնարավորություն են տվել բացահայտելու ներպետական կարգավորումների հիմնախնդիրներն ու բացերը և մշակել դրանց լուծման համար անհրաժեշտ տեսական ու գործնական նշանակություն ունեցող նոր մոտեցումներ:

Ատենախոսության գիտական նորույթը դրսևորվում է պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթներում:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները.

1. Հիմք ընդունելով ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցի in rem (գույքի դեմ) բնույթը, ինչպես նաև սուբյեկտիվ իրավունքի պաշտպանության քննարկվող կառուցակարգի հիմնական առանձնահատկությունները՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթը չի կարող բնորոշվել հայցային կամ հատուկ վարույթներին ներհատուկ բոլոր հատկանիշներով՝ պայմանավորված վիճելի նյութական իրավահարաբերությունների առանձնահատկություններով: Հետևաբար, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթը անհրաժեշտ է դիտարկել որպես քաղաքացիական դատավարության տարբերակված ձև և սահմանել հայցի ընդունելիության, գործի քննության նախապատրաստման, ապացուցման բեռի

բաշխման, հայցի հիմքի հիմնավորվածության գնահատման դատավարական տարբերակված կարգ:

2. Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայց հարուցելու հիմքերը, որոնց առկայությունը պարզելու համար նախաձեռնվում է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մինչդատական փուլը՝ ուսումնասիրությունը, և ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցի հիմքերը չեն նույնանում: Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայց ներկայացնելու՝ իրավասու մարմնի իրավունքի ծագումը պայմանավորված է հայց հարուցելու հիմքերը պարզելու հետ և ներառում է հայցի առիթ հանդիսացող Օրենքով սահմանված նախապայմանները, այն է՝ ուսումնասիրությունը հաշտության համաձայնություն կնքելով ավարտելու հնարավորության սպառումը կամ բացակայությունը և շահագրգիռ անձանց վարույթի մասին ծանուցելու միջոցով գույքի ապօրինի ծագման ենթադրությունները հերքվելու բացառումը, որոնք պետք է հանդիսանան դատական քննության առարկա այն ծավալով, որքանով այդ ընթացակարգերը չպահպանելը խոչընդոտել է վարույթը ուսումնասիրության փուլում ավարտելու՝ Օրենքով սահմանված հնարավորությունը իրականացնելուն: Նշված նախադրյալների բացակայությունը պետք է հանգեցնի քաղաքացիական դատավարության հարուցումը բացառող իրավական հետևանքի, այն է՝ վեճի լուծման՝ օրենքով սահմանված մինչդատական կարգը չպահպանելու հիմքով դատարանի կողմից հայցադիմումը վերադարձնելուն:

3. Հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրությունը ապօրինի ծագում ունեցող գույք չհայտնաբերելու հիմքով ավարտվելու դեպքում այն վերսկսելու գործուն կառուցակարգ նախատեսված չլինելը հանգեցնում է ուսումնասիրությունը վերսկսելու՝ իրավասու մարմնի իրավունքի անհարկի սահմանափակման այն հիմնավորմամբ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում ավարտված ուսումնասիրությունը վերսկսելը հնարավոր է միայն դատական ակտի վերանայման բողոք ներկայացնելու միջոցով, այնինչ գույքի ապօրինի ծագումը հերքվելու դեպքում ուսումնասիրությունը ավարտվում է իրավասու մարմնի կողմից կայացրած որոշման հիման վրա առանց դատարանի միջամտության: Առաջարկվել է իրավասու մարմնին լիազորել վերսկսել նշված հիմքով ուսումնասիրությունը այն դեպքում, երբ պարզվել է, որ անձը կեղծված ապացույցների հիման վրա հիմնավորել է իր եկամուտների օրինական աղբյուրը կամ այնպիսի հանգամանքներ են ի հայտ եկել, որոնք այդ պահին հայտնի չէին և չէին էլ կարող հայտնի լինել իրավասու մարմնին:

4. Հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրությունը հաշտության համաձայնագիր կնքելով ավարտելը պետք է հանդիսանա ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթը ավարտելու առաջնային ձևը, որի հնարավորության սպառումը դիտվի ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայց ներկայացնելու նախապայման: Այսինքն՝ իրավասու մարմնի

կողմից ուսումնասիրության փուլում հաշտության առաջարկ ներկայացնելու՝ Օրենքով սահմանված հայեցողական լիազորության իրացումը բացարձակ չէ և սահմանափակված է իրավաչափության պայմաններով, որոնց ապահովումը ուսումնասիրության արդյունքներով շահագրգիռ անձանց իրավունքների պաշտպանության առանցքային երաշխիքներից է: Հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրությունը հաշտության համաձայնություն կնքելով մասնակի ավարտելու օրենսդրական կառուցակարգը բացակայում է, այնինչ գործնականում չեն բացառվում վիճելի գույքի մի մասը պետությանը փոխանցելու մասին համաձայնությունները, որոնք ուսումնասիրության փուլում չկնքվելու արդյունքում ամբողջ ծավալով դատական քննության առարկա են դարձվում: Վարույթի իրականացման արդյունավետությունից և դատարանում այդ գործերի՝ ողջամիտ ժամկետում քննության սկզբունքի ապահովման անհրաժեշտությունից ելնելով՝ առաջարկվել է նախատեսել ուսումնասիրությունը հաշտության համաձայնություն կնքելով մասնակի ավարտելու կառուցակարգը:

5. Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցի քաղաքացիադատավարական կարգով քննությանը ներհատուկ է այդպիսի հայցով դատարան դիմելու հայցվորի տնօրինչական իրավունքի պայմանական իրականացման կարգը, ինչը դրսևորվում է նաև պաշտպանության հայցային միջոցների տնօրինման հետ կապված իրավունքների հարցում: Իրավասու մարմինը լիազորված է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայց ներկայացնել դատարան հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրության ընթացքում պարզված հանգամանքների և հայտնաբերված գույքի շրջանակներում կազմված եզրակացության հիման վրա, ինչը հանդիսանում է գործի դատական քննության առանցքը: Ուստի հայցվորի կողմից հայցի հիմքի և (կամ) առարկայի փոփոխությունը, որը դրսևորվում է հայցը նոր փաստական հիմքերով լրացնելով, ինչպես նաև նոր գույքի բռնագանձման պահանջ ավելացնելով այն դեպքում, երբ ուսումնասիրության ընթացքում այդ փաստերը վեր չեն հանվել և եզրակացությամբ գույքը ապօրինի ծագում ունեցող չի դիտարկվել, չպետք է թույլատրելի համարել: Բացառիկ դեպքերում հայցի հիմքի և (կամ) առարկայի փոփոխությունը կարող է թույլատրվել, եթե այդ հանգամանքները ուսումնասիրության իրականացման ժամանակ հայտնի չէին և չէին էլ կարող հայտնի լինել իրավասու մարմնին, և ինչի հիման վրա իրավասու մարմինը վերսկսել է ավարտված ուսումնասիրությունը՝ վեր հանելով համապատասխան հիմքերը:

6. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից ձևավորած նախադեպային իրավունքի լույսի ներքո գտնում ենք, որ հանրային և մասնավոր շահերի հավասարակշռման, դատավարության կողմերի իրավահավասարության և մրցակցության սկզբունքները վարույթում երաշխավորելու նպատակով գույքի՝ ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը գործարկելու համար բավարար չի կարող համարվել գույքի ձեռքբերման արժե-

քի և անձի օրինական եկամուտների անհամապատասխանությունը ապացուցելը, այլ դատարանը ներկայացված ապացույցների հիման վրա պետք է պարզի ենթադրյալ հանցավոր արարքի և գույքի ձեռքբերման միջև անուղղակի պատճառահետևանքային կապի առկայությունը կամ առկայության ողջամիտ հավանականությունը: Հետևաբար, հայցվորի կողմից պետք է ներկայացվեն նաև այն փաստերը, որոնք բավարար են դիտվել հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրությունը սկսելու համար՝ միաժամանակ ներկայացնելով ապացույցներ ուսումնասիրության ընթացքում այդ հիմքերը բավարար չափով հիմնավորվելու վերաբերյալ: Վիճելի գույքի ապօրինի ծագման փաստը կանխավարկածի հիման վրա հաստատված համարելու հիմնական նպատակը գույքի ապօրինի ծագման ողջամիտ հավանականությունը հաստատված փաստ վերածելն է, հետևաբար պատասխանողի կողմից ներկայացրած հիմնավորումները գնահատելու հարցում գույքի ձեռքբերման աղբյուրի առավել հավանական վարկածին առաջնություն տալու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ առաջարկվել է ներդնել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթներին ներհատուկ հավանականությունների հավասարակշռման ապացուցողական չափանիշը:

7. Գույքի՝ ապօրինի ծագում ունենալու կանխավարկածի գործարկման համար անհրաժեշտ փաստերը ապացուցելու պարտականությունը կրում է բացառապես հայցվորը, իսկ պատասխանողի համար իրավական հետևանքներ, այդ թվում՝ ապացույցներ ներկայացնելու անհրաժեշտություն, կարող է առաջացնել հայցվորի կողմից իր վրա դրված ապացուցման պարտականության կատարումը: Ուստի անհրաժեշտ է ներդնել ապացուցման բեռի բաշխման փուլային կարգ այն հիմնավորմամբ, որ ապացուցման բեռը միաժամանակ կողմերի միջև բաշխելու ընդհանուր կանոնով ղեկավարվելու դեպքում ստացվում է, որ դեռևս գույքի ապօրինի ծագումը հաստատված չլինելու պայմաններում պատասխանողի վրա դրվում է գույքի օրինական ծագումը ապացուցելու պարտականություն, ինչը նախատեսված չէ Օրենքով: Ապացուցման բեռը փուլային կարգով բաշխելու դեպքում դատարանը առաջին հերթին հայցվորի վրա ապացուցման պարտականություն դնելու միջոցով պետք է որոշի գույքի՝ ապօրինի ծագում ունենալու կանխավարկածի գործադրման հարցը, այնուհետև պետք է պատասխանողի վրա դնի օրինական եկամուտներով գույքի ձեռքբերումը ապացուցելու պարտականությունը:

8. Թեև ՀՀ իրավական համակարգ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ինստիտուտը սկզբնապես ներդրվել է որպես գույքի դեմ հարուցվող վարույթ, սակայն Օրենքի իրավակարգավորումների համակարգային վերլուծությունը թույլ է տալիս պնդել, որ Օրենքով նախատեսված հիմքերի առկայության պայմաններում գույքի դեմ վարույթը վերածվում է անձի դեմ վարույթի, որը կարող է կիրառվել նաև համակցված: Վարույթը փոխակերպվում է անձի դեմ, երբ հայցվորը իրավունք է ստանում պատասխանողին ներ-

կայացնել հայցի ներկայացման պահի դրությամբ ապօրինի ծագում ունեցող գույքի շուկայական արժեքի, իսկ շուկայական արժեքի պարզման անհնարինության դեպքում՝ այդ գույքը ձեռք բերելու արժեքի չափով գումար բռնագանձելու պահանջ: Այդուհանդերձ, նշված իրավունքը ածանցվում է ապօրինի ծագում ունեցող գույքը բնեղենով բռնագանձելու հիմնական պահանջից և կարող է ներկայացվել խիստ սահմանափակ դեպքերում: Մասնավորապես՝ ապօրինի ծագում ունեցող գույքը այլ անձանց՝ Օրենքով պաշտպանվող իրավունքներով ծանրաբեռնված լինելու փաստը ինքնին չի կարող դիտվել գույքի փոխարեն վերջինիս շուկայական արժեքը պատասխանողից բռնագանձելու պահանջի հիմք, այլ դատարանը պետք է պարզի, թե արդյոք այդ գույքը պատասխանողի հետ չփոխկապակցված անձանց՝ Օրենքով պաշտպանվող իրավունքներով ծանրաբեռնված լինելը էականորեն նվազեցնում է տվյալ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի իրականացման իրավազորությունները, թե ոչ:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը: Հետազոտության արդյունքների հիման վրա ձևավորված տեսական դրույթները և եզրահանգումները կարող են նպաստել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ինստիտուտի էության բացահայտմանը, վարույթում շահագրգիռ անձանց իրավունքների պաշտպանության հարցերի խորքային ուսումնասիրությանը: Հետազոտության արդյունքները հետագայում կարող են օգտագործվել հետազոտողների կողմից՝ իրենց գիտական ուսումնասիրությունների շրջանակում: Ատենախոսության հայեցակարգային դրույթները կարող են օգտակար լինել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի դասընթացների, սեմինարների և այլ կրթական միջոցառումների իրականացման համար:

Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ինստիտուտի համալիր ուսումնասիրության արդյունքները կարող են նպաստել ՀՀ իրավական համակարգում նշված ինստիտուտի կայացմանը և նոր ձևավորվող իրավակիրառ պրակտիկայի միասնականության ապահովմանը: Ներկայացված առաջարկությունները և դիտարկումները կարող են գործնականում իրացվել «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ քննարկվող վարույթին վերաբերելի կարգավորումների կատարելագործման համար:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը: Թեկնածուական ատենախոսության հիմնական դրույթները ու տեսական եզրակացությունները ներկայացվել և քննարկվել են Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական դատավարության ամբիոնում: Հետազոտության արդյունքները արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված գիտական հոդվածներում, որոնք լույս են տեսել տարբեր ամսագրերում և գիտական ժողովածուներում: Ատենախոսության մի շարք

դրույթներ ատենախոսի կողմից ներկայացվել են գիտական զեկույցների և սեմինար-քննարկումների շրջանակներում:

Աշխատանքի կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, դրանցում ամփոփված ինը պարագրաֆներից, եզրակացությունից և օգտագործված իրավական ակտերի և գրականության ցանկից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հեղինակը հիմնավորում է հետազոտության թեմայի արդիականությունը, ներկայացնում է թեմայի մշակվածության աստիճանը, հետազոտության տեսական, նորմատիվ և փորձառական հիմքերը, մեթոդաբանությունը, հետազոտության օբյեկտը և առարկան, նպատակը և խնդիրները, գիտական նորույթը, ձևակերպում է պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, արտացոլում է հետազոտության տեսական ու գործնական նշանակությունը, հետազոտության արդյունքների փորձարկումը և դրա կառուցվածքը:

Ատենախոսության առաջին գլուխը՝ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի ընդհանուր իրավական բնութագիրը» վերտառությամբ, կազմված է երեք պարագրաֆներից:

Առաջին գլխի առաջին պարագրաֆում՝ «Առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման մոդելների ընդհանուր բնութագիրը» վերտառությամբ, քննարկվում են հետազոտվող ինստիտուտի իրավաբանական բնույթի հետ կապված հիմնահարցերը, ուսումնասիրվում են գույքի՝ քաղաքացիական դատավարության կարգով բռնագանձման կառուցակարգերի ներդրումը նախատեսող միջազգային կոնվենցիաները, արտասահմանյան երկրներում ներդրված առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման մոդելները, դրանց բնորոշ հատկանիշները և հաջող կիրառելիության փորձերը՝ զուգահեռներ տանելով ՀՀ իրավական համակարգում ներդրված մոդելի հետ: Տարբեր մոդելների ուսումնասիրության արդյունքում հեղինակը վեր է հանում այդ մոդելների տարբերակման հիմքում ընկած չափանիշները, մասնավորապես՝ հարուցված քրեական գործի առկայությունը կամ բացակայությունը, գույքի ձեռքբերման և հանցավոր գործունեության միջև ուղղակի կամ անուղղակի կապը հաստատելու պարտադիրությունը, ապացուցողական չափանիշը և կիրառելի ապացուցողական կանխավարկածները: Հեղինակը, ընդգծելով քննարկվող ինստիտուտի քաղաքացիադատավարական բնույթը, հետևություն է կատարում այն մասին, որ ՀՀ իրավական համակարգում ներդրված առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման ինստիտուտը հանդիսանում է մինչդատական և դատական վարույթների համակցություն, քանի որ մեկնարկում է հանցավոր գործունեության արդյունքում ձեռք բերված գույքի հայտնաբերման և հայց հարուցելու հիմքերի ու-

սումնասիրության՝ Օրենքով նախատեսված պարտադիր գործընթացով:

Առաջին գլխի երկրորդ պարագրաֆում՝ «In rem (գույքի դեմ) հայցի դրսևորման առանձնահատկությունները ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթում» վերտառությամբ, հետազոտվում է in rem (գույքի դեմ) հայցի առանձնահատկությունները՝ ներկայացնելով ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցին բնորոշ գծերը, ինչպես նաև տարբերակիչ հատկանիշները: In rem բռնագանձման ինստիտուտի վերաբերյալ տարբեր երկրների փորձի ամփոփման արդյունքում հեղինակը եզրակացրել է, որ այն հանդիսանում է բացառիկ միջոց և կիրառվում է քրեական վարույթի իրականացման անհնարինության պայմաններում, մինչդեռ ներպետական օրենսդրությամբ քաղաքացիադատավարական կարգով գույքի բռնագանձման վարույթը կարող է իրականացվել քրեական վարույթին զուգահեռ, դրանից անջատված և անգամ դրանից վերացարկված: Հեղինակը անհամաձայնություն է հայտնում այն տեսակետին, որ ներդրված ինստիտուտը փոխառվել է առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման չորրորդ՝ չբացատրվող հարստացման մոդելից, այլ գտնում է, որ այն փոխառել է նաև in rem (գույքի դեմ) բռնագանձման երրորդ մոդելի տարրեր, քանի որ հայցի հարուցման համար ուսումնասիրություն սկսելու հիմքերը առնչվում են նաև քրեական հետապնդման կամ հարուցված քրեական գործի պայմաններում ապօրինի ծագում ունեցող գույքի առկայության հիմնավոր կասկածներին: Հեղինակը, վերլուծելով ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի առանձնահատկությունները, եզրահանգել է, որ սուբյեկտիվ իրավունքի պաշտպանության քննարկվող կառուցակարգին բնորոշ չեն հայցային և հատուկ վարույթին ներհատուկ բոլոր հատկանիշները, ինչի արդյունքում առաջարկվել է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթը կարգավորել որպես քաղաքացիական դատավարության տարբերակված ձև՝ հաշվի առնելով վարույթի դատավարական ձևի առանձնահատկությունները:

Առաջին գլխի երրորդ պարագրաֆում՝ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցի տարրերը» վերտառությամբ, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցի անհատականացման գործնական նշանակության համատեքստում հեղինակը ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումների լույսի ներքո ներկայացնում է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցի անհատականացման չափանիշները: Սույն պարագրաֆում վեր են հանվում ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցի տեսակի առանձնահատկությունները և այլ հայցերից տարբերակելու ուղենիշերը: Հեղինակը հիմնավորում է, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջը իր բնույթով ճանաչողական հայց է, քանի որ նյութաիրավական պահանջը ուղղված է դատարանին՝ որոշելու վիճելի գույքի իրավական կարգավիճակը: Նշվածի համատեքստում հեղինակը

գտնում է, որ գույքի ապօրինի ծագումը հիմնավորող փաստական հանգամանքների առկայության իրավական հետևանքը այդպիսի գույքը հօգուտ պետության բռնագանձելն է, ուստի ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցի իրավական և փաստական հիմքերը հանդես են գալիս միասնության մեջ:

Սույն պարագրաֆում հեղինակը ուշադրություն է հրավիրում ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայց հարուցելու հիմքերին և դրանց իրավական նշանակությանը: Հեղինակը գալիս է այն եզրահանգման, որ հայց հարուցելու հիմքերը և ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցի հիմքերը չեն նույնանում, և առաջ է քաշում այն տեսակետը, որ հայց հարուցելու հիմքերը ներառում են նաև հայցի առիթ հանդիսացող օրենքով սահմանված նախապայմանները, այն է՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հարցը մինչդատական փուլում լուծելու հնարավորության սպառումը հավաստող հանգամանքները:

Ատենախոսության երկրորդ գլուխը՝ «Հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրության փուլում կատարվող գործողությունները և հայցի հարուցումը» վերտառությամբ, կազմված է երեք պարագրաֆներից:

Երկրորդ գլխի առաջին պարագրաֆում՝ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթում հայցի նախնական ապահովման միջոցների կիրառման առանձնահատկությունները» վերտառությամբ, ուսումնասիրվում են ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի մինչդատական փուլում հայցի նախնական ապահովման միջոցների կիրառման առանձնահատկությունները: Հեղինակը վերլուծում է հայցի նախնական ապահովման միջոցների և հայցի ապահովման միջոցների կիրառման հարաբերակցությունը, քննարկվող վարույթում նախնական ապահովման միջոցների կիրառման նպատակը և կարևորությունը: Վեր են հանվում այն նախապայմանները, որոնց առկայության դեպքում իրավասու մարմինը կարող է դիմել նախնական ապահովման միջոցների կիրառման համար և այն հարցերի շրջանակը, որոնք դատարանը պետք է պարզաբանի դիմումի քննության շրջանակներում:

Հաշվի առնելով ապօրինի ծագում ունեցող բռնագանձման վարույթում հայցի նախնական ապահովման միջոցներ կիրառելուց հետո պատասխանողից պահանջվող գույքի ծավալի հետագա հնարավոր փոփոխությունները՝ հեղինակը առաջարկել է, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցադիմում ներկայացվելու դեպքում հայցի նախնական ապահովման միջոցները ոչ թե իրավունքի ուժով նույն ծավալով գործեն որպես հայցի ապահովման միջոցներ, այլ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու որոշմամբ քննարկի նաև հայցի նախնական ապահովման միջոցը հայցի ապահովման միջոցով փոխարինելու հարցը՝ հաշվի առնելով կիրառված նախնական ապահովման միջոցների և հայցապահանջի համաչափությունը՝ անհ-

ռաժեշտության դեպքում ձևափոխելով այն:

Երկրորդ գլխի երկրորդ պարագրաֆում՝ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրությունը ավարտելը» վերտառությամբ, ուսումնասիրվում են գույքի ապօրինի ծագումը հերքվելու դեպքում, հաշտության համաձայնություն կնքվելու դեպքում և ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայց ներկայացնելու մասին որոշում կայացնելու դեպքում հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրությունը ավարտելու կարգը, ինչպես նաև դրա իրավական հետևանքները: Հեղինակը անդրադառնում է ապօրինի ծագում ունեցող գույք չհայտնաբերելու հիմքով վարույթը ավարտելու դեպքում ուսումնասիրությունը վերսկսելու օրենսդրական կառուցակարգին, որը հեղինակի գնահատմամբ անարդյունավետ է և սահմանափակում է իրավասու մարմնի լիազորությունը: Նշվածի համատեքստում հեղինակը առաջ է քաշել իրավասու մարմնի կողմից ավարտված ուսումնասիրությունը վերսկսելու կարգի և հիմքերի վերաբերյալ նոր մոտեցումներ:

Այնուհետև, հետազոտելով հաշտության համաձայնության իրավական բնույթը և քննարկվող վարույթում հաշտության համաձայնություն կնքելու տարբերակված կարգը՝ հեղինակը վեր է հանում հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրության փուլում հաշտության համաձայնություն կնքելու համար անհրաժեշտ նախադրյալները և կնքելու կարգը, կնքված հաշտության համաձայնագիրը դատարանի կողմից հաստատելու համար անհրաժեշտ պահանջները: Հեղինակը կարևորում է ՀՀ գլխավոր դատախազության կողմից հաշտության առաջարկ ներկայացնելու լիազորության իրականացման հարցում վարույթում շահագրգռված անձանց իրավունքների ապահովման երաշխիքներ սահմանելու անհրաժեշտությունը, որի շրջանակներում առաջադրում է հաշտության առաջարկ ներկայացնելու՝ իրավասու մարմնի հայեցողական լիազորության սահմանափակումներ:

Հեղինակը գտնում է, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթը ավարտելու առաջնային ձևը պետք է հանդիսանա ուսումնասիրությունը հաշտության համաձայնություն կնքելով ավարտելու եղանակը, իսկ դրա հնարավորության սպառումը դիտվի դատարան գույքի բռնագանձման հայց ներկայացնելու նախապայման: Միևնույն ժամանակ, քննարկելով վարույթի իրականացման արդյունավետության գործոնները՝ հեղինակը առաջարկում է հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրությունը հաշտության համաձայնություն կնքելով մասնակի ավարտելու կառուցակարգի ներդրում:

Երկրորդ գլխի երրորդ պարագրաֆում՝ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցի իրավունքի նախադրյալները» վերտառությամբ, քննարկվում են ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայ-

ցի ընդունելիության փուլում դատարանի կողմից քննարկման ենթակա հարցերը, հայցադիմումի ձևին և բովանդակությանը ներկայացվող լրացուցիչ պահանջներ սահմանելու անհրաժեշտությունը և հայցի իրավունքի նախադրյալները պահպանված չլինելու դատավարական հետևանքները: Հաշվի առնելով վիճելի իրավահարաբերության առանձնահատկությունները՝ հեղինակը վեր է հանում իրավասու մարմնի՝ հայցի իրավունքի նախադրյալները և ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայց ներկայացնելու լիազորության ծագման պայմանները: Հեղինակը առաջարկում է վարույթը իրավասու մարմնի կողմից հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրության մինչդատական փուլում ավարտելուն ուղղված Օրենքով սահմանված գործողություններ կատարելը դիտարկել որպես հայցի իրավունքի նախադրյալ: Անդրադառնալով հայց ներկայացնելու՝ Օրենքով սահմանված նախապայմաններին՝ հեղինակը գտնում է, որ հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը պարզելու պարտադիր պահանջ պետք է համարել ապօրինի ծագում ունեցող գույքի առկայության բավարար հիմքերի մասին հետևությունների առկայությունը և այդ գույքի շուկայական արժեքի՝ Օրենքով սահմանված շեմը գերազանցելու փաստը հաստատվելը: Միաժամանակ, առաջարկվել է հայցադիմումին կից ներկայացվող փաստաթղթերի ցանկի մեջ ներառել հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրության ընթացքում հավաքագրված փաստաթղթերի և այլ նյութերի ամբողջական փաթեթը:

Ատենախոսության երրորդ գլուխը՝ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցի քաղաքացիական դատավարության կարգով քննությունը» վերտառությամբ, կազմված է երեք պարագրաֆներից:

Երրորդ գլխի առաջին պարագրաֆում՝ «Գործի քննության նախապատրաստական փուլում կատարվող դատավարական գործողությունները» վերտառությամբ, հեղինակի կողմից պարզաբանվում են հայցադիմումի պատասխան ներկայացնելու ավելի երկար ժամկետ սահմանելու, վարույթով շահագրգռված անձանց սպառիչ շրջանակը պարզելու լրացուցիչ կառուցակարգ ներդնելու հարցերը: Վերլուծելով վարույթի կողմերի դատավարական կարգավիճակի առանձնահատկությունները՝ հեղինակը անդրադարձել է գույքի սեփականատեր հանդիսացող պատասխանողի և միաժամանակ այդ գույքի իրական շահառու դիտվող պատասխանողի դատավարական կարգավիճակների տարբերություններին: Նշվածի համատեքստում հեղինակը եզրահանգել է, որ այն գույքի սեփականատերը, որի իրական շահառու դիտվում է ուսումնասիրվող անձը, ներգրավված լինելով վարույթում որպես պատասխանող՝ վիճելի իրավահարաբերության միջնորդավորված սուբյեկտ է և ամբողջ ծավալով չի օգտվում պատասխանողի կարգավիճակից բխող իրավունքներից և պարտականություններից:

Անդրադառնալով հայցի հիմքը և առարկան փոփոխելու՝ հայցվորի դատավարական իրավունքին՝ հեղինակը հիմնավորում է, որ դատարանը չպետք է թույլատրի հայցի հիմքի և (կամ) առարկայի այն փոփոխությունը, որը դրսևորվում է հայցը նոր փաստական հիմքերով լրացնելով կամ նոր գույքի բռնագանձման պահանջով ավելացնելով այն դեպքում, երբ ուսումնասիրության ընթացքում այդ փաստերը իրավասու մարմնի կողմից վեր չեն հանվել և եզրակացությամբ այդ գույքը ապօրինի ծագում ունեցող չի դիտարկվել:

Երրորդ գլխի երկրորդ պարագրաֆում՝ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջի գործով ապացուցման բեռի բաշխումը և գույքի՝ ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը» վերտառությամբ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ձևավորած դատական պրակտիկայի, եվրոպական առաջադեմ երկրներում ինստիտուտի հաջող կիրառելիության փորձի ուսումնասիրության հիման վրա քննարկվել են վարույթում կիրառելի ապացուցողական չափանիշները և ներդրված ինստիտուտով կիրառվող գույքի՝ ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը գործարկելու պայմանները: Հեղինակը արդարացված է համարում քննարկվող վարույթում ապացուցողական կանխավարկածի կիրառումը, ինչը հնարավոր է դարձնում գույքի ապօրինի ծագման ողջամիտ ենթադրությունների հիման վրա գույքը բռնագանձել հօգուտ պետության, այդուհանդերձ, հեղինակը գտնում է, որ ներկայիս կարգավորումներով առաջադրված չեն գույքը ապօրինի ծագում ունեցող որակելու չափանիշները, ինչպես նաև գույքի և հանցավոր գործունեության միջև անուղղակի կապը հաստատելու հիմքերը:

Հեղինակը, ուսումնասիրելով չբացատրվող հարստացման մոդելը կիրառող երկրներում գործող ապացուցման կանոնները, հիմնավորում է հավանականությունների հավասարակշռման ապացուցողական չափանիշի ներդրման անհրաժեշտությունը և չափանիշի կիրառելիության շրջանակները: Անդրադարձ է կատարվում այն հարցին, որ Օրենքը հնարավորություն է տալիս գույքը բռնագանձել առանց գույքի ձեռքբերման և հանցավոր գործունեության միջև թեկուզև անուղղակի կապը հաստատելու հանգամանքի, ինչը կարող է հանգեցնել անձի հիմնարար իրավունքների խախտման: Առավել խնդրահարույց է դիտարկվում պաշտոնատար անձանց նկատմամբ հարուցված վարույթներում գույքի ապօրինի ծագում ունենալու կանխավարկածի գործարկումը այն գույքի նկատմամբ, որը ձեռք է բերվել պաշտոնը ստանձնելուն նախորդող ժամանակահատվածում: Նշվածի համատեքստում հեղինակը առաջարկում է գույքի՝ ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը գործարկելու համար անհրաժեշտ համարել ուսումնասիրություն սկսելու հիմք հանդիսացող հանգամանքի և ենթադրվող հանցավոր գործունեության հետ գույքի ձեռքբերման անուղղակի կապը հավաստող ապացույցների ներկայա-

ցումը:

Հեղինակը անհամաձայնություն է հայտնում իրավակիրառ պրակտիկայում ապացուցման բեռի բաշխմամբ հայցվորի և պատասխանողի վրա միաժամանակ ապացուցման պարտականություն դնելու դատարանների գործելակերպին՝ հետևություն կատարելով այն մասին, որ հայցվորի կողմից ապացուցման պարտականությունը կատարելն է հանգեցնում գույքի՝ ապօրինի ծագում ունենալու կանխավարկածի գործադրմանը և պատասխանողի կողմից իր գույքի օրինական ծագումը ապացուցելու անհրաժեշտությանը: Ամփոփելով շարադրվածը՝ հեղինակը առաջարկել է ներդնել ապացուցման բեռի բաշխման փուլային կարգ:

Երրորդ գլխի երրորդ պարագրաֆում՝ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջի վերաբերյալ վճռի կայացման առանձնահատկությունները» վերտառությամբ, հեղինակը անդրադառնում է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վճռի կայացման առանձնահատկություններին և այն հարցերի շրջանակին, որոնք ենթակա են պարզման գործն ըստ էության լուծելու համար:

Անդրադառնալով ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցի հիմքի հիմնավորվածության գնահատման համար դատարանի կողմից քննարկման ենթակա հարցերին՝ հեղինակը հետևություն է կատարել, որ ուսումնասիրության օրինականության նկատմամբ դատական վերահսկողության գործող կառուցակարգերը բավարար չեն վարույթում ներգրավված անձանց իրավունքների պաշտպանության համար, ուստի վճռի կայացման փուլում դատարանը պետք է պարզի, թե արդյոք ապահովված են եղել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մինչդատական փուլում շահագրգիռ անձանց՝ Օրենքով նախատեսված ընթացակարգային երաշխիքները:

Հեղինակի կողմից քննարկվել են նաև ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջը ապօրինի ծագում ունեցող գույքի շուկայական արժեքին համարժեք գումարի բռնագանձման պահանջով փոխարինելու դեպքերը և կարևորվել է այդպիսի պահանջ ներկայացնելու հայցվորի իրավունքի որոշ սահմանափակումների ամրագրումը որպես վարույթի նպատակների իրացման երաշխիք: Նշված համատեքստում հեղինակը առաջադրել է գույքը բռնագանձելու անհնարինությունը որոշելու չափանիշները:

Եզրակացության մեջ ընդգրկված են հետազոտության հիմնական արդյունքները և հեղինակի եզրահանգումները, ինչպես նաև օրենսդրության կատարելագործման առնչությամբ ներկայացված առաջարկները: Ի լրումն պաշտպանության ներկայացվող դրույթների, այդ եզրահանգումները և առաջարկները ամփոփ հանգում են հետևյալին.

1. ՀՀ իրավական համակարգում ներդրված ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջը հանդիսանում է in rem (գույքի դեմ) հայցի յուրահատուկ դրսևորում, սակայն չի նույնանում դասական in rem հայցի հետ: Չնայած ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջն ուղղված է դատարանին և վերաբերում է գույքի իրավական կարգավիճակը հաստատելուն, սակայն գույքի բռնագանձման վարույթը հարուցվում է անձի դեմ, և վերջինս ներգրավվում է գործին որպես պատասխանող կողմ՝ իր դատավարական կարգավիճակից բխող իրավունքներով և պարտականություններով:

2. Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթում հայցի նախնական ապահովման միջոց կիրառելու հարցի քննության շրջանակներում դատարանը պետք է պարզի առաջին՝ արդյոք ապօրինի ծագում ունեցող գույքի առկայության վերաբերյալ ողջամիտ կասկածը իրատեսական է դարձնում հետագայում հարուցվելիք հայցով գույքի բռնագանձման պահանջի բավարարումը, և երկրորդ, նախնական ապահովման միջոցներ չձեռնարկելու դեպքում առկա է գույքի օտարման կամ գույքի արժեքի էական փոփոխության հնարավորություն, և դա կարող է արդյոք դժվարացնել կամ անհնարին դարձնել այդ արդյունքների հիման վրա իրավասու մարմնի կողմից գույքի բռնագանձման պահանջ ներկայացնելը:

3. Հաշվի առնելով ապօրինի ծագում ունեցող բռնագանձման վարույթում հայցի նախնական ապահովման միջոցներ կիրառելուց հետո պատասխանողից պահանջվող գույքի ծավալի հետագա հնարավոր փոփոխությունները՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցադիմում ներկայացվելու դեպքում հայցի նախնական ապահովման միջոցները ոչ թե իրավունքի ուժով նույն ծավալով պետք է գործեն որպես հայցի ապահովման միջոցներ, այլ դատարանը ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցադիմումը վարույթ ընդունելու որոշմամբ ի պաշտոնե պետք է քննարկի հայցի նախնական ապահովման միջոցը հայցի ապահովման միջոցով փոխարինելու հարցը՝ հաշվի առնելով կիրառված ապահովման միջոցների և -հայցապահանջի համաչափությունը՝ անհրաժեշտության դեպքում ձևափոխելով այն:

4. Հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրության փուլում շահագրգռված անձանց ներկայացրած փաստական տվյալների հիմնավորվածությունը գնահատելու և ապացույցները ընդունելու չափանիշների բացակայությամբ պայմանավորված՝ անհրաժեշտ է շահագրգիռ անձանց ներկայացրած ապացույցները իրավասու մարմնի կողմից գնահատելու և եզրակացության հիմքում դնելու հարցը լուծելու համար սահմանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վերաբերելի կար-

գավորումների վրա հիմնված միասնական չափանիշներ:

5. Վարույթի շրջանակներում հաշտության համաձայնագրով պետությանը փոխանցվելիք գույքի արժեքի թույլատրելի նվազագույն շեմը որոշելիս անհրաժեշտ է հիմք ընդունել ոչ թե ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ եզրակացության տվյալներով ենթադրյալ ապօրինի ծագում ունեցող գույքի արժեքի 75 տոկոսը, այլ հաշտության համաձայնությունը կնքելու պահի դրությամբ անձի օրինական եկամուտներով չհիմնավորվող գույքի արժեքի 75 տոկոսը:

6. Հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրության արդյունքները վերջնական ամփոփող եզրակացությունը և իրավասու մարմնի կողմից ուսումնասիրության ընթացքում ձեռք բերված բոլոր նյութերը անհրաժեշտ է ներառել հայցադիմումին կից ներկայացվող փաստաթղթերի ցանկում որպես հայցադիմումի ներկայացման պարտադիր պահանջ, որը չպահպանելը հանգեցնի դատարանի կողմից հայցադիմումը վերադարձնելու վերաբերյալ որոշում կայացնելուն:

7. Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթով շահագրգռված անձանց սպառիչ շրջանակը վեր հանելու և գործի բազմակողմանի քննություն իրականացնելու նպատակով Օրենքում անհրաժեշտ է կատարել լրացում, որի համաձայն՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը հրապարակային ծանուցումների պաշտոնական կայքէջով հայտարարություն է տարածում դատարանում քննվող գործի մասին՝ նշելով իրավասու մարմնի կողմից պահանջվող գույքերը նույնականացնող տվյալները, և ծանուցմամբ սահմանում է առնվազն մեկամսյա ժամկետ շահագրգիռ անձանց վարույթում որպես ինքնուրույն պահանջ ներկայացնող կամ չներկայացնող երրորդ անձ ներգրավելու միջնորդություն ներկայացնելու համար:

8. Այն դեպքում, երբ պատասխանողը գործի դատական քննության փուլում ներկայացնում է վիճելի գույքի ձեռքբերումը հավաստող ապացույցներ կամ Օրենքով սահմանված հայտարարագիր, որի հիման վրա հերքվում է գույքի ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը, և միաժամանակ պատասխանողը չի հիմնավորում ուսումնասիրության փուլում այդ ապացույցները իր կամքից անկախ հանգամանքներում չներկայացնելը, ապա դատարանը պետք է իրավասու լինի դատական ծախսերը անկախ գործի ելքից ամբողջությամբ կամ մասամբ դնել պատասխանողի վրա:

9. Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի մինչդատական փուլում շահագրգիռ անձանց՝ Օրենքով նախատեսված ընթացակարգային երաշխիքները պահպանված լինելու հարցը ենթակա է քննարկման գործի դատաքննության փուլում, և դատարանը, պարզելով, որ իրավա-

սու մարմինը մինչդատական փուլում շահագրգիռ անձանց չի ծանուցել ուսումնասիրության արդյունքների մասին կամ չի սպառել վարույթը հաշտության համաձայնություն կնքելով ավարտելու հնարավորությունը, պետք է հայցը առանց քննության թողնելու մասին որոշում կայացնի:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1) "IN REM LAWSUIT IN THE LEGAL SYSTEM OF RA", Պետություն և իրավունք, N 3 (94), 2022, ԵՊՀ հրատ., Երևան, 122-131 էջերը:

2) «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթում հայցի նախնական ապահովման միջոցների կիրառման առանձնահատկությունները», Պետություն և իրավունք, N 1 (92), 2022, ԵՊՀ հրատ., Երևան, 95-107 էջերը:

3) «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցի տարրերի հիմնախնդիրները ՀՀ քաղաքացիական դատավարությունում», Պետություն և իրավունք, N 1 (95), 2023, ԵՊՀ հրատ., Երևան, 76-85 էջերը:

4) «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջի գործերով ապացուցման բեռի բաշխման առանձնահատկությունները», Դատական իշխանություն, թիվ 10-12 (292-294), 2023, Երևան, 69-86 էջերը:

5) «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայց հարուցելու առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարությունում», «ՀՀ սահմանադրական դատարան. Տեղեկագիր» պարբերական, թիվ 4 (112), 2023, Երևան, 168-192 էջերը:

6) «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրությունը հաշտության համաձայնությամբ ավարտելը», Դատական իշխանություն, թիվ 1-3 (295-297), 2024, Երևան, 47-61 էջերը:

7) «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջի վերաբերյալ վճռի կայացման առանձնահատկությունները», «Կաճառ» գիտական պարբերական, թիվ 1, 2024, Երևան, 131-144 էջերը:

МЕРИ КАРЕНОВНА ХАЧАТРЯН

ПРОИЗВОДСТВО О КОНФИСКАЦИИ СОБСТВЕННОСТИ НЕЗАКОННОГО ПРОИСХОЖДЕНИЯ КАК ДИФФЕРЕНЦИОННАЯ ФОРМА ГРАЖДАНСКОГО ПРОЦЕССА

Резюме

Введение конфискации активов без вынесения обвинительного приговора в правовую систему Республики Армения представляет собой значительный сдвиг в борьбе с преступностью и коррупцией. Этот инновационный подход позволяет конфисковывать имущество, происхождение которого невозможно установить, без необходимости в уголовном осуждении или текущем уголовном деле. Эта мера, также известная как конфискация in rem, представляет собой значительный отход от традиционных методов уголовного возврата активов, поскольку она может быть осуществлена в рамках гражданского судопроизводства и сосредотачивается на самом имуществе, а не на уголовной ответственности лица.

Несмотря на свой потенциал, новый правовой институт вызвал дебаты относительно ее конституционности, поскольку Конституционный суд РА в настоящее время рассматривает Закон «О конфискации имущества незаконного происхождения» (далее также Закон) и его соответствие основным правам и правовым принципам. Внедрение этого института вызвало практические проблемы, особенно на досудебной стадии рассмотрения имущества и доходов. В данной диссертации рассматриваются эти проблемы оценивая предварительные условия для права на подачу иска, требования к подаче исков о конфискации в суд, критерии допустимости исков, стандарты доказательства и требования к принятию решений о конфискации.

Впервые в отечественной юриспруденции вопросы, связанные с процедурами конфискации активов незаконного происхождения, становятся предметом комплексного изучения и анализа. На основе анализа различных мнений, высказанных в теории, отечественном и зарубежном законодательстве, международных правовых регламентах и судебной практике, раскрывается суть конфискации in rem. Сравнительный анализ с международными моделями конфискации активов без вынесения обвинительного приговора показывает, что армянский модель объединяет элементы из различных мировых практик. Это сравнение предоставляет ценные идеи о лучших практиках и потенциальных улучшениях для отечественного законодательства. Целью исследования является выявление эффективной практики и предложение усовершенствований для приведения армянского законодательства в соответствие с успешными международными

моделями, обеспечивая баланс между эффективным возвратом активов и защитой прав человека.

В соответствии с действующими правилами, процедура рассмотрения исков о конфискации имущества незаконного происхождения в основном следует общим правилам гражданского судопроизводства с дополнительными специальными положениями Закона. Однако эти положения не полностью учитывают уникальные аспекты таких исков. Поэтому в диссертации предлагается рассматривать конфискацию незаконного имущества как отдельное производство в рамках гражданского судопроизводства с конкретными правилами, регулирующими допустимость исков, основания и процессуальные стандарты оценки исков.

В диссертации рассматриваются уникальные стандарты доказательств, связанные с конфискацией активов без вынесения обвинительного приговора, в частности, использование стандарта «баланса вероятностей», который отличается от традиционных стандартов, используемых в гражданском судопроизводстве. Закон не требует установления непрямой связи между преступной деятельностью и приобретением активов, что вызывает опасения относительно потенциальной справедливости разбирательства. В этой связи диссертация также находит противоречия в отношении применения презумпции незаконного происхождения имущества, поскольку она устанавливает незаконное происхождение путем доказывая, что имущество не обосновано законным доходом. Подчеркивается, что в случае отсутствия доказательств того, что имущество получено за счет законного дохода, еще не доказано, что имущество было приобретено незаконно. Поэтому важно установить критерии этой презумпции и условия ее практической применимости.

Результаты этого исследования имеют значимость как теоретически, так и практически. Теоретически исследование способствует пониманию конфискации in rem и ее реализации в правовой системе. Практически предложенные решения и рекомендации предлагают руководство для правоохранительных и законодательных органов, потенциально информируя о будущих правовых реформах и повышая эффективность практики конфискации активов.

Результаты этого исследования были распространены через различные научные публикации, способствуя более широкому академическому и практическому дискурсу о конфискации активов без вынесения обвинительного приговора и ее внедрения для правовых систем во всем мире.

MERI KAREN KHACHATRYAN

PROCEEDINGS FOR CONFISCATION OF PROPERTY OF ILLEGAL ORIGIN AS A DIFFERENTIAL FORM OF CIVIL PROCEEDING

Summary

The introduction of non-conviction-based asset forfeiture in the legal system of the Republic of Armenia represents a significant shift in addressing crime and corruption. This innovative approach permits the confiscation of property whose legal origin cannot be established, without necessitating a criminal conviction or an ongoing criminal case. This measure, also known as in rem forfeiture, represents a significant departure from traditional criminal asset recovery methods, as it can be carried out in a civil procedure and focuses on the property itself rather than the individual's criminal liability.

Despite its potential, the new legal framework has sparked debate regarding its constitutionality, with the RA Constitutional Court currently reviewing the Law on "Confiscation of Property of Illegal Origin" (hereinafter also the Law) and its alignment with fundamental rights and legal principles. The implementation of this institution has raised practical challenges, particularly in the pre-trial phase of property and income examinations. This thesis addresses these challenges by evaluating the prerequisites for the right to file a claim, the requirements for filing confiscation claims in court, the criteria for claim admissibility, the standards of proof, and the requirements for making decisions on confiscation.

For the first time in domestic jurisprudence, issues related to the proceedings for confiscation of assets of illegal origin are becoming the subject of comprehensive study and analysis. Based on the analysis of various opinions expressed in theory, domestic and foreign legislation, international legal regulations, and judicial practice, the essence of in rem forfeiture is revealed. Comparative analysis with international models of non-conviction-based asset forfeiture reveals that the Armenian approach integrates elements from various global practices. This comparison provides valuable insights into best practices and potential improvements for domestic legislation. The research aims to identify effective practices and propose enhancements to align Armenian law with successful international models, ensuring a balance between effective asset

recovery and the protection of individual rights.

Under current regulations, the procedure for examining claims to confiscate property of illegal origin primarily follows general civil procedure rules, with additional special provisions provided by the Law. However, these provisions do not thoroughly address the unique aspects of such claims. Therefore, the thesis suggests treating the confiscation of illegal property as a distinct proceeding within civil proceedings, with specific regulations governing claim admissibility, grounds, and procedural standards for evaluating claims.

The thesis delves into the unique evidentiary standards associated with non-conviction-based asset forfeiture, particularly the use of a "balance of probabilities" standard, which differs from the traditional standards used in civil proceedings. The law does not require establishing an undirect link between criminal activity and the acquisition of assets, which raises concerns about the potential fairness of proceedings. With this regard the thesis also finds contradictions regarding the execution of the presumption of illegal origin of the property, in that it establishes the illegal origin by proving that the property was not justified by legal income. It is emphasized that in the event that proof of the property being obtained by legal income is lacking, it is still not proven that the property was acquired illegally. Therefore, it is essential to establish the criteria of this presumption and the conditions of its practical applicability.

The findings of this research are significant both theoretically and practically. Theoretically, the study contributes to the understanding of in rem forfeiture and its implementation within a legal framework. Practically, the proposed solutions and recommendations offer guidance for law enforcement and legislative bodies, potentially informing future legal reforms and enhancing the effectiveness of asset forfeiture practices.

The results of this research have been disseminated through various scientific publications, contributing to the broader academic and practical discourse on non-conviction-based asset forfeiture and its implications for legal systems globally.